

ՏԵՂՅ



# ԱԿԱԴԻՄԻ



ՄԱՐՏԻ ԱԿՐԹԱՆՔ

ԽԵՊՐՈՒՅԻ ՄՈ. ՀՀՕ. 605. 605. 25. ԽԵՊՐՈՒՅԻ ԽԵՊՐՈՒՅԻ

Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 16

ԳԻՒ 5 ԴՐՈՒՅՇ

16 ՄԱՐՏ 1922



## ՆՊԱՏԱԿԸ

Ներդաշնակութիւնը պէտք է ըլլայ ճիզբն նպատակը իսկ զայն՝ կարելի է ծևոք ըերեկ կշռադատուած ճիզբով միայն: Մարմնակրթանքը իր որոշ սահմանը ունի ուրիշ՝ անդին՝ այլասեռումը կ'սկսի:

Ամէն մարզիկի համար սահման մը կայ եւ այդ սահմանին մէջ է որ ան ներդաշնակ է ինքն իրեն նետ, երբ ճիզ կը վատնուի ուրիշի սահմաններէն ներս մտնելու համար, նո՞ն միջոցը նպատակին եւ սպառ ումք տնօղի կու առ:

Մեր նպատակը պէտք է ըլլայ լաւ կերպով հասկցնել այս կէտը հայ մարզիկին:

«Հայ Սկառտափի խմբագրութիւնն հաճորքով՝ կը ծանօթացնէ իր ընթերցողներուն, մարմակրթական եւ սկառտական շարժումով շահա բրրուող ամերիկացի երկու համակրելի անձնաւորութիւններ, P. R. Phillips եւ E. D. Hedden, առաջինը Մերձաւոր Արեւելքի Y. M. C. A. ի մարմակրթական միուղի ընդհ. վարիչ, իսկ երկրորդը նոյն կազմակերպութեան պատասխներու միուղին պետ։ Ներկայ թիւով մեր ընթերցողներուն կը ներկայացնենք մարզական շարժումի եւ խաղի մասին գրուած երկու շահեկան գրութիւններ, որոնք Հ. Մ. Ը. ի մարզական յանձնախումբի ղիմումին վրայ յատկապէս գրուած են յիշեալներուն կողմէ։ «Հայ Սկառտափ» ի համար կը յուսանք որ ուրիշ անգամներ այ առիթը պիտի ունենանք իրենց աշխատակցութիւնը վայելելու, ինչպէս խոստացած են իրենք։

(Խ. Խ.)

## ԵՐԱԶ ՄԸ ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ

Որ և է ատեն 5000 աղօց և 3000 աղջիկներու հաւաքումը տեսնելը զարմանք չպատճառեր, ոսկայն 8000 աղօց և աղջիկներու միւնոյն տեղը՝ միասնաբար գաշտացին խաղերու մրցումներ կատարելը առնուազն արատասովոր գէպք մըն է։

Անցեալ Յունիոնին բարերազդութիւնը ունեցայ հանդիսանեն ըլլալու, Ամերիկեան մեծագոյն քաղաքի մը հանրային վարժարաններէն մէկուն առողջապահական ճիւղին նախաձեռնութեամբ տեղի ունեցած այս արլերիկ բարեկին դամին։ Դաշտ երթարու միջոցիս ճամրան առաջնորդս հանդէսի մասին կորոց մը տեղեկութիւններ տուաւուաւ։ Տասը տարեկանէն մինչեւ տասնըլից տարեկան եղող 5000 աղաքը և 3000 աղջիկները քաղաքին 150 հանրային վարժարաններու աշակերտութիւնը կը ներկայացնէին։ Խերաքոնջիւր խաղ զանազան գառակարգերու բաժնուած էր, մրցորդներու ծանրութեան, բարձրութեան և աստիճաննին համաձան։ Ամէն մրցորդ միայն մէկ մրցման արտօնուած էր մասնակցիլ։ Հինգ հարիւր պաշտօնաբարներ կը ծառայէին։ Առաւատուն երկու ժամուան մէջ խաղերուն բոլոր նախափորձերը վերջացան և մէկ ժամուան ճաշէ մը վերջ, ժամուան մը մէջ վերջնական մրցումները տեղի ունեցան։ Այսպէս երկու ժամուան ընթացքին 8000 մրցորդներէ բաղկացած այս հանդէսի յաջողութեամբ զլուխ հանուեցաւ։

Երր գետին մէջ կանանչ կղղեակի մը վրայ հարթուած այս գեղեցիկ մարզադաշտը հասայ, վրաններու կանոնաւոր շարքի մը դէմ-հանդիման դուայ ինքողինքս, որոնք բանակի օրերուն մէջ վերյիշել առւին։ Առաջնորդս ինձ ըստ թէ

առօնք մրցորդներուն հագուստները հանելու համար շինուած վրաններ էին։ Խերաքանչիւր վարժարանի երկու վրան արամազրուած էր, մէկը տղոց և միւնոները աղջիկներուն համար, Այս վրանները կրկին նոպատակներու կը ծուայէին, թէ՛ գպրոցական բանականալիներ և թէ



Ernest D. Hedden (ԵՐՆԷՍԹ Ս. ՀԵՍՏԵՆ)

Metropolitan Director of Boys' Work of the Y.M.C.A.

Ներկայիս Յ. Մ. Ը. Ա. ի Մերձաւոր Արեւելքի պատասխներու կրթական գործին պիտի է, երկար տարիներ Ամերիկայի զանազան բազարներուն նոյն ճիւղին մէջ պաշտօնավարած էւ մեծ փորձառութիւն ծնուր քերած է։ Ալարտած է Williams Mass. ի գոյէնը և երկու տարի պաշտօնավարած է նոյն քընճին մէջ։ Երկու տարի ալ գանուած է Տիթրոյթ Յ. Մ. Ը. Ա. ի մէջ։ Պատերազմի շրջանին բանուկին մէջ ծառայած է իրր սպայ և ապա եղած է զինուարական Յ. Մ. Ը. Ա. ի պաշտօնավարած Այս տարուան արտօնային թէմբր որ որոշուած է կրկին Սև ծովի եզերը։ Քիլիսի մէջ հաստատել ուղղակի իր վարչութեան տակ պիտի ըլլայ։

Հանուելու վայրեր էին։ Առանցմէ զատ կային բանակատեւիններու, կարմիր խաչի, դործիքներու վրաններ և հատ մըն ալ կորսուած ու զանուած տղոց համար։

Աւելի յասաջանալով վազքի ճամբաններու, ցատկելու, արգելքներու, ուրկաններու և ուրիշ զանազան գոյքերու լորիսրինդսուի մը հասանք, որոնց երեւոյթը սկիզբները օտարականի

մը համար խիոտ շփոթեցուցիչ կրնար ըլլալ։ Ասկալն երբ չուրջս նայեցայ, ոչ մէկ շփոթութեան նշոյլ տեսայ։ Դաշախն խրաքանչիւր մասը մէկ խազի յատկացուած էր։ Պաշտօնատարներու առատութիւնը ամէն ինչ կը դիւրացնէր։ Ասրձանակներ կը պայթէին, վաղողները յառաջ կը խոյանային, վազքը պասած էր։ Երկու վայրկեան վերջ ուրիշ մրցում մը կ'սկսէր և այսպէր շարունակարար, մինչեւ որ ամէնքն ալ իրենց կարողութեան ապացոյցը տալու տարթը ունենային։

Դրեթէ ամէն ինչ ժամացոյցի ճշգապահութեամբ տեղի կ'ունենար։ Երբ առաջնորդս ուշադրութիւնս դէպի հակայ զաշախն կեդրունը դարձոց՝ տեսայ որ ամփոխէն բարձր, օդին մէջ և սկսուաններու կողմէ կառավարուող փայտէ խոչոր ժամացոյցը մը կար, որ վայրկեանը վայրկեանին մրցման զանազան փուլերը կը ցուցադրեր։ Այս ժամացոյցին յառաջացման համաձայն մրցումները իրարու կը յաջորդէին, Յայտագրին մէջ ամէն մրցումի համար ժամ մը որոշուած էր և մնծ ժամացոյցին միջոցով մրցումները իրենց նշանակեալ ժամերուն տեղի կ'ունենային։

Մրցորդները ճշդիւ դիտէին թէ մրցումները ո՞ւր և ե՞րբ տեղի պիտի ունենային, որովհետեւ մրցավայրին զանազան մասերը, ամենուն տեսանելի բարձրութեան մը վրայ թուանշաննեալ աղդագրեր հաստատուած էին։ Այս մանրակրկիտ կարգադրութիւնները շարաբներով մշակուած ծրագիրներու և հրահանգներու արդիւնքն էին, որպէսզի երբ աղջիկ մը կամ տղայ մը դաշտ համնի, իր ընելլիք ճշդիւ գիտնայ։ Դպրոցներու համար հրահանգներ պարունակող զեկոյցներ հրատարակւեցան, բերանացի տեղեկութիւններ տրուեցան. և երբ մրցման օրը հասաւ ամէն տղայ գիտէր թէ իր մրցումը ո՞ւր և ե՞րբ տեղի պիտի ունենար և ամէն աղջիկ իրեն համար որոշուած վայրը կրնար երթալ։ Ասկէ զատ ամէն մրցորդ պիտակ մը կը կրէր, որուն վրայ նշանակուած կար դպրոցին, մրցման և մրցման ո՞ր դաստորումին պատկանիլը, և այս պիտակը ամէն մրցումէ առաջ մասնաւոր պաշտօնեայի մը կողմէ կը քննուէր։

Երբ առաջնորդիս հարցուցի թէ ի՞նչպէս տղաքը և աղջիկները այս արտակարգ դաշտային մրցման կը պատրաստուէին, ինձ պատասխանելով ըստ որ մրցման յայտագրին մէջ գանուող այս խազերը ֆիզիքական կըր-

թութեան կանոնաւոր դրութեան մը մասները միայն կը կազմեն, և այդ գրութիւնը կը պարունակէ արլեքիկ, մարմնամարզական, զանազան խազերու, մարմնոյ կանոնաւորման, պարերու և առողջապահական այն դասաւանդութիւնները, որոնք տարուան ամբողջ տեսողութեանը այս դպրոցներուն մէջ տեղի կ'ունենան։ Դպրոցական պահերէն օրական համաստի վայրկեան տամադրուած է Ֆիզիկական կրօւթեան, որ դպրոցական տղոց համար խիստ սիրելի դաշտած է, որով տաքը իրենց բնազդին եւ բնական պահանջմաններուն զինացում տուող բալու հանույքը կը գտնեն մարմնակրամին մէջ։ Հետեւարար այս դաշտային համագէնները ֆիզիքական կըրեթութեան տարեկան շինարար յայտագրին մէկ մասը կը կազմէն։

Մինեմայի լուսանկարիչնմը նշարեցի որ ընտրելագոյն մասերը կը լուսանկարէր և երկու օր վերջը քաղաքին ամենամեծ թատրոնին մէջ առանց ցուցադրութեան ներկայ դանուեցայ, ուր ժողովուրդը տեղեկացաւ. թէ իմաստուն ուսումնական խարուուրդ մը իրենց յանձնուած մանչերուն և աղջիկներուն որքան հազարու կը գտնուէր, Յաղթակ մնները իրենց հանգէպ ցոյց տրուած պատիւներէն և ստացած մրցանակներէն որքան հպարտ էին և ո՞վ գիտէ նոյն օրը նոյն այդ շէնքին մէջ քանի՛ քանի՛ սկրնակ փոքրիկներ որոշեցին իրենց կարգին պատրաստուիլ այն ապագայ օրուան, երբ իրենք ալ ի՞ր մարզիկ հերոս մը սինէմայի մէջէն հուսարակութեան ծափերուն առարկայ պիտի դառնային։

Սկառուտները իրենց մասուցած ծառայութիւներով օգտակար հանգիստացան։ Հանդիսաթեսներուն միջեւ կարգապատութեան պահապանման հսկեցին, պաշտօնաւարիներու լրատուներ եղան, դաշտին մէկ կողմէն միւսը մարզական գործիքներ փոխադրեցին, մնծ ժամացոյցը կտռավարեցին, կարմիր խաչի սպասարկութիւնը ստանձնեցին՝ ի հարկին զարմանումներ տանելու համար պատրաստ կ'սպասէին առաջին առթիւ որ եւ է անհրաժեշտ օգնութիւն մը ընելու, և օգնեցին որ կորուած փոքրիկները իրենց ծնողքներուն վերադրուին։ Անոնք հիւրասէր և օգնելու պատրաստ նշանակելի ոգի մը ցոյց տուին,

8000 մրցորդներուն միջեւ մի միայն մէկ արկած մը պատահեցաւ, տղայ մը ոյժ առած երկայնութիւն ցատկած միջոցին ուժքը գար-

ձաւ : Հազարաւոր մարզական գործիքներէն հատ մը խկ չի կորսուեցաւ , պաշտօնատարներու ստացած լաւ հրահանգներուն և հոգածութեան շնորհիւ : Այս փառաւոր աթլեթիկ օրուան մեծ արդիւնքները իմ վրաս խոր տըսպաւորութիւն մը թողուցին : Հակառակ որ առնուազն քսան զանազան ազգեր այս մըրցման կը մասնակցէին , բարեկամական մրցակցութեան և պօրդիմենի ի յատուկ գեղեցիկ ոգին ակներեւ կը տեսնուեր : Երբ գպրոցի մը մէկ յաղթականին անունը կը յայտարարուեր , ուրիշ գպրոցներու տղաքները և աղջիկները վեհանձնօրէն այդ յաղթականը կը ծափահարէին : Յայտագրին մէջ անձնափութիւն չի կար : Մրցորդները պօրդիմենի ի արժանավայել ոգիին մէջ այնքան լաւ մարզուած էին որ արուած սրոշումները առանց վիճարանութեան կ'ընդունուեին : Պաշտօնատարները ընարսւած էին իրենց վուահելի համբաւին համար և անոնց սրոշումները մրցորդներուն կողմէ առ հասարակ կ'ընդունուեին առանց այլ և այլի : Ամբողջական ծրագրին արագ և կանոնատոր գործադրութիւնը տպաւորիչ էր : Մրցման արդիւնքները այնքան շուտով և ճշգրտորէն բանակատ'զիններուն կը տեղեկացուեր : Որ , մրցման աւարտումէն անմիջապէս վերջ յաղթականներուն դրօշակներ , բաժակներ , սոկեայ , արծաթեայ կամ անագապղինձէ շքանշաններ կը արուեին :

Հաս զգացի ամրող տարուան մը ընթացքին որդեգրուած ֆիզիքական կրթութեան մը ինստուտուն յայտագրին կատարեալ արժանիքը : Այս մրցումները իրենց օգտուկար արդիւնքներով յատակօրէն կ'ապացուցանէին և բացարձակապէս կ'արդարացնէին այս մարզանքներուն պատասխանատութիւնը ստանձնողներուն իմաստուն ծրագիրներ :

Պոլսոյ գպրոցական տղոց և աղջիկներուն համար ասոր նման ծրագիր մը երազելը արդեօք արտասոց երեւակայութիւնն մը պիտի ըլլար : Բայ իս , ես այդ կարծիքէն չեմ , և հաւատքով կ'սպասեմ կանխագոյն այն օրուան , երբ Պոլսոյ գպրոցական կենցագին մէջ ասոր նման տարեկան հանդէս մը տեղի պիտի ունենայ : Դուք որ երիտասարդութեան ֆիզիքական կրթութեամբը կը հետաքրքրուիք և անոր հոգածութիւնը ստանձնած էք , ասոր իրադրման նիւթապէս կրնաք օգնել :

E. M. Hadden

Director of Boys Department  
American Y. M. C. A. Constantinople

## ԽԱՂԸ

Դիւրութեան համարմեր և խաղախինիւթը բաժնենք չ'ըս գլխաւոր մասերու . Մանկական խալլը , Տղայական խալլը , Զափահանսերու խալլը և Հասոյի աղբիւր ընտրուած խալլը (professional play) :



P. P. PHILLIPS

F. F. ՖԻԼԻՔՍ

National Physical Director of Y. M. C. A.

Մր. Ֆիլիքս Ամերիկայի զանազան նախանձներուն Հարաւային Ամերիկայի . Արժանիթինի մէջ , իբր Յ. M. C. A. ի Physical Director երկար տարիներու փորձառութիւնն ծնուր բիւրած է և ներկայի Մերձաւոր Արեւելի Յ. M. C. A. ի ընդհանուր մարմակրթական փարիչ նշանակուած է : Յ. M. C. A. ի մէջ մարմակրթանիր մասին տեսուկան զանախառութիւնն մը հաստատած ըլլալէն զատ շաբաթական երկու անգամ ալ Յ. M. C. A. ի պաշտօնէութեան յատուկ զօրծնական փարժութիւններու գասընթացը մը կ'առաջնորդէ նաւազներու մարզարտին մէջ : Ինք այստեղ ներկայացուցին է նաև Միջազգային Ազիմակական մրցաման իրու յանձնախումբին եւ անոր մասնագիտական խորհրդական (technical adviser) իր նախամեծնութեամբ տեղի պիտի ամսամեջնան Յանիսի սկիզբը Միջազգային Աթլ.թիկ մրցումներ , զոր կազմակերպող յանձնախումբն ալ նախազան և միեւնոյն ատեն :

Այս խաղերուն իւրաքանչյուրը թէ պահանջիք և թէ արդիւնքի աեսակէտէ իրարմէ չափազանց կը տարբերին : Մանկական խալլն

է, մանկան մը մինչև ուժը տարեկանը, առանց երկրորդի մը օգնութեան ըրած պարզ գործքերը, որոնք իրականին մէջ անոր փոքր անհատականութիւնը մարմնաւորող բնազդին արդիւնքն են: Տղայական խաղն է ուժէն մինչեւ տասնընդինդ տարեկան եղող տղոց բնական, արկածախնդրական, սկառատական և կատողթախալ շարժւամբ: Զափահաններու խաղով և սել կ'ուզեմ՝ գպրացներու և երկրորդական վարժարաններու մէջ տեսնուած կազմակերպեալ և խմբական խաղը, որ կանխաւ գծուած է որոշ նպասակի մը համար. և իր հասոյի աղբիւր մը ընթուած (արհեստական) խաղով ըսել կ'ուզեմ՝ այն խաղը որ թէն ձեւականին մէջ չափահաններու խաղին կը նմանի, սակայն իրականին մէջ տարբեր չարժառիթնիրէ կը խմբանուի և այս կը փոխէ թէ՛ խաղացողին և թէ՛ հանդիսատեսին հոգերանական ու կրթական տպաւորութիւնները:

Մանկական խաղը լուրջ է, այսինքն մանուկին խաղը լուրջ հանգամանք մը ունի, անլոկ թուլութիւն մը կամ ժամանցի շարժուած մը չէ, այլ մանուկին համար խաղը կը նմանի պարտաճանաչ գործաւորի մը իր գործին համգէս ունեցած յարումին:

Մարդիկ երբ երթեմն մանուկներու վրայ կարգ մը յիմարական շարժուածներ կը տեսնեն, առունք նուազ լուրջ իմացականութեան տէր մանկան մը խաղի մէկ ձեւն են: Մանկան համար խաղը լոկ նոր բանի մը պատրաստուելու միջոց մը չէ, այլ ինքնին արժէքաւոր փորձառութիւն մընէ: Խաղին գերազանց լրջութիւն է: Խաղին գերազանց լրջութիւնն է որ անոր կրթական արժէքը կը կողմէ: Մանուկը խոզով ինքզինքը ամբողջովին իր գործին կուտայ և այսպէս զարգացումէ զարգացում կ'ոստաստէ: Խաղը մանուկը կ'ուռնացնէ, որովհետեւ այն աճումի արգիւնքն է:

Եւ որպէսնետեւ գործաւնէութիւնը կազմածքը կը զարգացնէ և ճարտարութիւնը միայն գործքով ձեռք կը բերուի, մանուկը անպատճառ պէտք է խաղայ, հակառակ պարագային չաձիր: Մանուկը անհարթ աշխարհ կուգայ, հետեւարար զայն յղկելով կետնքին պէտք է յարմարցուի:

Հարաւստ խաղի աւանդութիւն մը աղգային թանկագին ստացուածք մըն է: Խաղին վրայ հիմնուած կրթութիւնը ամրողջովին խաղ չէ: Խաղը բնաւորութիւնը կը զարգացնէ միայն այն ատեն՝ երբ բնութեան հետ զուգընթաց կ'երթայ և կեանքը՝ վերջապէս տարրալուծեալ վի-

ճակին մէջ, խաղ մըն է կարելի է ըսել: Մանուկները աւելի կատարելութեամբ և բնականն կերպով կը զարգանան, եթէ խաղալու ազատ պատեհութիւնը ունենան: Խաղը մատոյին և մարմնական զարգացման համար հաւասար օգտակարութիւնն մը ունի:

Գիտակից տնհատականութիւնը վաղվզող տարիքին կը յաջորդէ:

«Մանկութեան գործերուն մէջ մանկընթացութիւն մը կայ, որ հեղեղի փոխուելով մանուկը մարդու կը վերածէ»:

«Տարիները իրենց նուէրներով կուգան, սակայն մանուկը անոնց համանելով պէտք է առնէ, հակառակ պարագային անոնք կը կորուին, կ'երթան:

Խաղին դասական առարկան՝ զննական է որմէ ծնունդ կ'առնեն քարէ զնդակը, հոլը և լն»:

Աւազը մանկական խաղին՝ դասական նիւթնէ: Կան որ անոր մէջէն սոկին զամել կը սորմին, մինչ ուրիշներ ալ անոր մէջ սոկին խոկնաւ չեն տեսներ:

Մանկական խաղերու բնոյթին տեղեակ ուսուցիչը սուտակի չափ հազուազիւած է և պատեսած հասարակութեան համար իր մարմնոյն չափ ծանր սոկիի սորմէքն ունի: Խնչպէս որ նորափիթիթ ծիլը ծառը յօրինելու համար նախ վտիս շիւդ մը կ'արձակէ, յետոյ հաւասարակշռելու համար փոքրիկ տերեւ մը և ոչ թէ մէկին ամբողջ արմատ մը կոճդ մը տուանց ծիւղերու և տերեւի, այնպէս ալ մանուկը պէտք է սորմի գործքով սկսիլ:

Խաղացող մանուկը կը նմանի այն որոտրգին, որուն սիրոտ կ'աշխատի ոչ թէ պահուածելու, վազելու և ցատկելու: և կամ թէ առողջ մարզանք մը բրած ըլլալու համար, այլ այն միայն նկատի ունի իր որսը — մէկը որ իր գործին համար ինքնիրմէն ելուծ է, մէկը՝ որ իր սկսած գործը լրացնելու համար ամէն ինչ պիտի տայ, նման այն քաղաքացիին՝ որ իր սիրածներուն ծառայելու համար՝ նոյն իոկ իր կեանքը պիտի զոհէ: Խաղալ կը նշանակէ նպատակի մը ծառան գառնողը: Մանուկը չգիտեր թէ ինքը ուսպէս մարդ ըլլալու համար կը մարդուի: Խաղը անոր Ասսուածն է, ոչ թէ որոշ նպատակի մը համար զինքը պատրաստող ուսուցիչը:

Յիմարական և լոկ հապճեապ խաղը՝ աւելի մատաղ ծռած ծառին ուղղուելուն կը ծառայէ, քան թէ նոր աճում մը պարզելու: Դժբախտարար կարգ մը տարէց մարդիկ մանկան խաղին մէջ յիմարականէն տարրեր բան չեն տեսներ:

1. Առաջնորդուած խաղը եւ անոր պահանջք:

Թողոր մանուկները խսդալու պարտաւորել,  
Ռիբա խաղը արգիլել.  
Նոր զավափարմներ հայթայթել,  
Զգուշաւոր ըլլալ եւ ի հարդին պրշապաննե  
Ցեսա՛նաց մանուեկներուն բարեկամը ըլլալ.

2. Խճբական խաղը եւ անոր նշանակութիւնը:

Տասը տարեկանէն վեր աղոց համար:  
Խումբի պատիւ.  
Ընկերականութիւն.  
Համազործակցութիւն.  
Քաղաքացիականութիւն,  
Վեհանձնութիւն.

3. Խալավայրերը եւ լինչ կը ներկայացնեն անոնք:

Միայն խաղերու յատկացեալ վայրեր.  
Խաղերու յարմար շինուած վայրեր.  
Յարմար միջավայրերու մէջ հաստատուած վայրեր.  
Վատանզի դէմ պաշտպանուած վայրեր.  
Հաւարոյթի կեղրոն նկատուած վայրեր.

4. Խաղին առաջնորդը գործիքներէն աւելի կարեւոր:

Նախ բարձր բարոյականի մը տէր պէտք է ըլլայ.  
Մանուկներուն հանդէպ համակրալից պէտք է ըլլայ.  
Աշխայդ եւ ո՛չ ծոյլ պէտք է ըլլայ.  
Արդար, բայց ոչ խիստ պէտք է ըլլայ.  
Հեռատես կազմակերպիչ մը պէտք է ըլլայ.  
Շատ մը սորոներու տեղինակ պէտք է ըլլայ.

5. Խաղին Ֆիզիկական օգտակարութիւնը  
կը կազմեն այն մարզանքները, որոնք մարմ-  
անը բոլոր գործարաններուն և մասններէն շա-  
տերուն համար խիստ ծանր չեն: Այս մարզանք-  
ները կատարելապէս բնական շարժումներ են  
և ջիղերը կը կրթեն համազործակցելու և հա-  
կակըռելու մասնները լաւագոյն աստիճանով  
քան թէ՛ մարմանամարզական շարժումները:

6. Խաղին մային օգտակարութիւնը կը կազմեն:

Պայրինապէս խորհելու անհրաժեշտութիւնը.  
Երեւակյութեան ուռանցումը.  
Ցողութիւնէ եւ նեղութենէ վերջ հանգիստը.  
Անհատական ոյժին զիտակցութիւնը եւ բիրտ  
գրգիռներուն վրայ հակակըռելը.

7. Խաղին բարոյական արժեքը  
որ սորվեցնէ, պարկեշտութիւն.

Վեհանձնութիւն, մաքրութիւն.

Պատիւ, վճռականութիւն, մաքրու խաղ.

Եւ պարծենկութենէ աւելի համեստութիւն:

8. Խաղին բարակական եւ ընկերական ար-  
ժեքը:

Ընկերութեան բոլոր խաւերուն համար ծուլարան  
մըն է.

Թողոր կրօնքներուն համար ծուլարան մըն է.

Բոլոր ցեղերուն համար ծուլարան մըն է.

Բոլոր ազգերուն համար ծուլարան մըն է.

Հարաւարը եւ աղքամը իրարու բով կը ըիրը.

Զօրաւորին կ'օգնէ, տկարին օգնելու համար, որ-  
պէսպի աղ սրներն ալ ինքինը ուն օդնեն:

9. Պոլսոյ համար խաղի յայտագրի մը նը-  
տամակուրիխնը լինչ պիտի ըլլայ.

Հրդեհնէ աւերտուած վայրերու մէջ զեղեց-  
կութեան կէտեր.

Թշուառառ թեան անկիւններուու տեղ ուրա-  
խութեան միջավայրեր.

Առողջ չահի մը արտադրիչ մեքենան:

Զօրաւորագոյն ցեղ մը արտադրիլու տառող-  
ջութեան գործարաններ.

Ընկերութեան մէջ մանկան իրաւունքնե-  
րուն ճանաչման նախաքայլեր.

Ոճիրներու և արկածներու գէմ զարման.

Նոր Պոլսո մը, նոր Թուբքիա մը յօրինելու  
և վերաշննելու ծրագիրներուն համար օգտա-  
կար նեցուկ մը.

Միջազգայն և միջցեղային բարեկամեց-  
գութիւն և խաղաղութիւն:

P. P. Phillips

National Physical director of

Y. M. C. A.

## ՊԱՍՔԵԹՊՈԼ

—\*\*\*—

Պասքեթպոլը աղղային խաղ մըն է Ամերիկա-  
ցիներուն՝ ինչպէս ֆութբոլը: Անգլիացիներուն հա-  
մար իր բազմապիսի առաւելութիւններուն և խիստ  
շահեկանութեան համար Ամերիկայի բոլոր անկիւն-  
ներուն մէջ տարածուած ըլլայէն զատ ծաւալած է  
նաեւ աշխարհի բոլոր միւս մասերուն մէջ ալ Այսօր  
Ամերիկայի ո և է մէկ քաղաքին մէջ կարելի չէ  
գտնել Y. M. C. A.ի հազմակերպութիւն մը, մար-  
զական միութիւն մը, համալսարան մը կամ քօյէն  
մը որ անմիջական իր սեփական չէնրին քով չու-  
նենայ նաեւ ուրիշ խաղերու կարգին մարզարան մը  
պասքեթպոլի խաղին յատուի: Ամերիկային գուրա  
ալ, ո և է տեղ ուր կայ Ամերիկեան կազմակեր-  
պութիւն մը, անխուսափելիորէն այդ խաղը իրենց  
սիրած մարմանակըթական խաղերուն մէջ առաջին  
տեղը կը գրաւէ: Հոս Պոլսոյ մէջ առաջին անգամ  
այդ խաղը սորեկրողն ու զարգացնողը եղած է  
Ռուպերթ Քոլէն, իսկ յաջորդարար պասքեթպոլի  
իրենց սեփական մարզարանները ունեցած են,  
Քոնսթանթինոսիուլ աղջկանց քոլէնը, Y. M. C. A.ի  
Ալբայի և Պոլսոյ մասնաճիւղերը, Ամերիկեան նա-  
ւազներու ակումբը են:

Հակառակ այսքան ընդհանրացած ըլլալուն  
պասքեթպոլը նորագոյն խաղ մը կարելի է նկատել  
Պատիւթիւնը հարած է Տր. Ճէյմս Նայումիթհ, Ամե-  
րիկայի Արքինկիրիւլու քաղաքին մէջ և առաջի

անգամ 1891ին, խաղացուած է նոյն քաղաքի քոլեցին մէջ՝ 30 տարուան համեմատարար այս կարճ ժամանակամիջոցին մէջ պարբեթովը անօրինակ կերպով դարձացած և ընդհանրացած է, և այսօր, Ամերիկայի մէջ, կարելի է զայն ամենէն ժաղավրդական խաղը նկատել:

Ուշեւս, Ամերիկայի սրօնի ուժարձին մէջ, ուրիշ ոչ մէկ խաղ այսքան չուտ պատռույ այս առտիճամին բարձրացած ըլլայր չարիւր հազարաւոր մարդկակ, երիսաւարդներ, պատանիներ և աղջիկներ անօրինակ խանգամառաւթեամբ՝ կը խաղան զայն Պատքեթովը կարելի է անուը թէ ներքին ընդարձակ սրանի մը կամ մարզարանի մը մէջ խաղու և թէ ամառը բաց դաշտն զբայց խաղը՝ ըլլայր զիսկելու, ըլլայր խաղալու տեսակէսագ չափաւանց զբայիչ և հետաքրքրական է։ Միեւնոյն տարնին զարգացման համար բազմակալմանի առուելութիւններ անի, սրամնեաւ իր պահանջած վերջին ձայր արագաշարժութեան, արագիւութեան և ճկունութեան շնորիւ, մարնին բոլոր մասերը շարժման մէջ կը գնէ։ Այսպէս որ այս յատկաւթիւններից օժտուած մարմիններ միայն կրնան լուրջ խաղերու և մրցութեարու մանակցելու համար պէտք եղած ճիզն ու կորովը սպառեց և որովհետեւ խաղակացնեած առաջնորդութիւնը շատ սահմանափակ է (իր առաւելուց զայն շափով հազին 463 քառ. մ. թր, առօնքի 1/16-ը դա թագունի խաղակացնեն), խաղացու մը տեսական կերպով վաղեւու և իր թաքերը գործուենէթեամ մէջ զնելով բանեցնեալ զառապարաւած է Այս և պատճառար որ խաղին տեսողութիւններ միայն 40 վայրի տեսուութիւնն այ պէտք է զարգարի 10 վայրի միջացով մը երկու կիսախաղերու վերածնել:

Այս խաղը ինչպէս բախնը, որքան երիսաւարդներու և տարեցներու յառակ, նոյն քանի զարդարական պատճառներու, սկսուաններու և աղջիկներու համար յարիմարացն խաղ մընէ չ պայմանա որ իր իրարիսներ մէջ չափազանցութիւններ ըլլան Այս վերջիններուն համար որոշաւած տեսազնութիւնը 22 վայրիկան է, որ 3 զագարով 8 ական վայրիկանոց չորս բառորդ խաղամիջնորդներու բաժնուած է Այս շնորհին և վերջին զարդարներուն մէջ 2 իսկ միջնին զարդարին մէջ 10 վայրի հանդիսաի պէտք է յակացնել:

Պատքեթագուի օրէնքները ամեն տարի վերաբնութեան կ'ենթարկուն և միշտ օգտակար նկատուած ժամանութիւններ կը մոցուին Այս իրաւաութիւնն ու սրաբաւականութիւնը որուած է պարեթագուի կանոններու միացեալ յանմախումբին (Joint Rules Committee of Basketball), որ Յ. Մ. Ս. Ա. Բ. Ա. Ա. Ս. (Amateur Athletic Union) և բօլինական պարբեթագուի կանոններու յանմախումբին միացումը 1913ին ձնուած առած մարմին մըն է։ Այս յանմախումբն է որ ամեն տարի ամերաժշտա փոփոխութիւնները կը մոցնե խաղին օրէնքներուն մէջ միշտ խաղացութիւնն շահը նկատի առնելով և թէեւ կարելի չէ ըստ թէ վերջնական և ամեն անպատճառ թիւն գործացնող վճարկան և անփոփոխիւթիւնի օրինադիրը մը պատրաստէ կարելի եղած է, սակայն այս վերջի տարուանը ընդհանրապէս

գոհացում տուած է՝ ըլլայր խաղացողներուն ըլլայր պաշտօնատարներուն

Այս միջոցին տրամադրութեամս տակ անիմ Ամերիկայի զանազան կազմակերպութիւններուն և զանազան քաղաքներուն 1921—22 տարեցնանի Պատքեթովի խաղին յատուկ պատկերազարդ ընդարձակ համարի մը մէջ խաղացած, տարեկան տեղեկագրութիւններ ու նիւֆնին զրաւական մըն է թէ Պատքեթագուի որքան ընդհանրացած և կարեւութիւններ տացած է Ամերիկայի մէջ։

Ամերիկան մարզական երեք կարեւուր և ընդարձակ կազմակերպութիւններ, Յ. Մ. Ս. Ա. Բ. Ա. Ա. Ս. և Ազգային բօլինական մարզական միավունը (National collegiate athletic association), հացուցած են հարիւրաւար Պատքեթովի զորաւոր խումբեր սրանք ամէն տարի յարմար եղանակներն մրցութեամբ Այդ անդիկացիութեամուրն կ'ըրեւայ որ 1921—22 տարեցնանին ամերիկան 36 քաղաքներու Յ. Մ. Ս. Ա. Բ. մասնաճիւղերէն 131 խումբեր մասնակցած են միկրոցութեամբ Ա. Ա. Ս. ունեցած և 23 քաղաքի մէջ մասնակցող 77 խումբ. իսկ Թօլէնսկանները ունեցած են 12 քաղաքի մէջ 81 խումբ Ասուցմէ զատ զարգացականներն ու զինուորական վարժարանի աշակերտներն առ ունեցած են առաջինը 14 խումբերու և երկուրդը 3 խումբերու միջն ուաշտօնական մրցութեամբ բազգատական այս ցուցակին կ'ըլլայր որ Ամերիկայի մէջ մարմարկթական ամենէն աւելի ընդարձակ զարժութեամբ նկատեալ կ'ունեայ Յ. Մ. Ս. Ա. Բ.

Օրբսուորէ մարզական աշխարձին մէջ Պատքեթագուին ստացած կարեւութիւններ գնահատելով կ'ըզր Մարզական Յանձնախումբը որոշած է ամէն կերտով բաշալերէլ և ուժ տալ անոր Հ. Ա. Ռ. Մ. Ի. մասնաճիւղերուն մէջ տարածերու համար։

Դժբախտաբար մինչ օրս Հ. Ա. Ռ. Մ. Ի. մասնաճիւղերէն հաղիւ մէկ կամ երկուքը ունեցած են պարեթագուի խաղակացներ, այն ալ լոկ ունեցած ըլլալու համար, առանց կանոնաւոր խաղիր կազմակերպելու Առախտալի է որ այժմ զբնելէ թուր մասնաճիւղերուն մէջ շարժում մը սկսած է, իրենց մարզարանները Պարեթագուի մէյմէկ խաղակացներով օժտելու համար Բարեթախտաբար անհրաժեշտ կազմանները անպահպիւլը մասնաճիւղի մը համար մեծ ժախեքերու ալ չի կարատիր, ամէնէն համեստ պիտունէի տէր մարզարանն անդամ կրնայ իր սեփական Պատքեթագուի խաղակացներ ունենալ իսկ սկսական Պատքեթագուի խաղավայրերը, քան Հ. Ա. Ռ. Մ. Ի. մասնաճիւղերը Մինչև անդամ անցեալ տարի Գուլէլիի որբանցին մէջ, ախոյիւսութիւն որոշելու համար անդի ունեցած են զառարանական մրցութեամբ իսկ վերջեր Արնաւալութիւնը առէկանց արհեստանոց պրանոցն անգամ անձնուէր ամերիկանէի մը չանցերով ունեցած է իր Պարեթագուի խաղարանը։

Հ. Ա. Ռ. Մ. Ի. օր մասնաճիւղը պիտի աւզէր իր

# ՊԱՍՔԵՇՊՈԼԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

(1921—22 տարի)



**A. Nyquist (Ա.ՆՅԱՑՔՈՒԹՅՈՒՆ)**

Physical Director of Sailor's Club

Մր. Նյուքությունը որ Ամերիկան նաևազներու Յ. Մ. Ս. Ա. ի բաժնին մէջ մարմարթանքի վարիչն է, Հ. Մ. Բ. Մ. ի մարզական յանձնախումբին դիմումին վրայ, նաևազներու մարզաբանին մէջ նաստատած է՝ մարմարթանքի դասընթացք մը Հ. Մ. Բ. Մ. ի մասնամիտերու մարզիկներուն յատուկ: Ինք է նաև լաւագոյն կոֆամարտիկ մը է եւ կոփամարտիկներու մարզից: Իր ծանրականացք կոփամարտիկներուն մէջ իրեն հաւասար չէ եղած Պոլսոյ մէջ: Պարբերաբար նոյն մարզաբանին մէջ կը կազմակերպէ կոփամարտի մրցումներ ամերիկացի եւ անգլիացի զինուորական կոփամարտիկներուն մէջ եւ իր իրաւարարութեան տակ: Այս մրցումներուն մէջ ընդհանրապէս կը մարզած կոփամարտիկներն են որ կը շահին:

---

որբ եղբայրներէն ու քոյրերէն եռու մնալ մարզական այս ճշուգին մշակման մէջ: Գիշ մը կամքն ու բարի համեցողութիւնը յաւական է այս այնքան կարեւոր պահանջ լրացնելու համար:

Մենք հաւատացած ենք որ մեր ոյս թերագուութիւնը իր օգտակար հետեւանքը պիտի ունենայ և մեր մասնաճիշտերը իրենց ֆութզովի խոռոչերու կողքին պիտի ունենան նաև Պարեմազովի խոռոչերը:

Գ. ՃՈՂՈՎԵԱՆ

Քաղուած Պասկերազովի կանոններու Միացեալ Յանձնախումբին կողմէ, զոր կը կազմեն Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերութիւնը, Ամարքու Մարզական Միութիւնը և Ազգային Քոչեական Մարզական Միութիւնը, 1921 ին վերանձնուած կանոնագրէն:

## Խ Ա Դ Ը

Պառքէթպոլը կը խաղացուի իւրաքանչիւրը հինգ հոգիէ բաղկացած երկու խումբով, որոնց նպատկն է, գնդակը մէկզմէկու փոխանցելով, իրենց յատուկ կողովին մէջ նետել և կարելի եղածին չափ շատ կէտ շահիլ, միեւնոյն ատեն թոյլ չտար որ հակառակորդը գլուզակին տիրանայ կած կէտ շահի:

## ԿԱՆՈՆ I

### ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ

ԽԱՆԱԴԱՏԸ, ՏԱՐԱԾՈՒԹԵՒՆԵՐԸ

Յօդուած 1.— Խաղադաշը պէտք է քառանկիւն մակերեւութ մը ունենայ որ և է արդելքէ աղատ: Սուակելագոյն չափերն են 27 մետր երկայնութիւն և 15 մետր լայնութիւն: Խոկ նուազագոյն չափերն են 18 ով 11 մետր:

Դաշնոր.— Խմբավետներու փոխազարձ համաձայնութեամբ Յօդ. 1 ը եւ Յօդ. 2 ին մէջ ցոյց տրուած սահմաններուն արգելվներէն ունեցած հեռաւորութիւնը կրնայ փոխուիլ:

ՍԱՀՄԱՆԻ ԳԻԾԵՐ, ԱՐԳԵԼՔՆԵՐԿ ԵՒԱԾ ՀԵՌԱԽՈՐՈՒԹԵՒՆ:

Յօդ. 2.— Խաղադաշը պէտք է որոշ գիծերով նշանակուած ըլլայ որոնք գոնէ 5 ոմ. լայնութիւն պէտք է ունենան: Պատի, ձողի, նստարանի նման հաստատուն արգելքներ նուազագոյն մէկ մէթր հեռու պէտք է ըլլան սահմանի գիծերէն: Երկայնութեան կողմի գիծերը կը կոչուին կողմնական գիծեր (side lines) և լայնութեան կողմի գիծերը վերջաւորութեան գիծեր (end lines): (Տեսնել յատակագիծի պատկերը):

#### ԿԵԴՐՈՆԻ ԵՐՋԱՆԱԿ

Յօդ. 3.— Խեդրոնի երջանակը պէտք է 61 ոմ. շառաւիզ ունենայ և նշանակուի խաղադաշտին կեդրոնը:


ԱԶԱՏ ՆԵՏԵԼՈՒ ԳԻԾԵՐ (Free Throw lines)

Յօդ. 4.— Ազատ նետելու գիծերը կը գըտնուին կողմայներուն յատակէն 4,57 մետր հեռու և 60 ոմ. երկայնութեամբ 2,5 ոմ. լայ-

Նութիւն կ'ունենան։ Իրարու զուգահատկան այս գիծի րուն միջին կէտերը կը դանուին վերջաւորութեան գիծերուն միջին կէտերը իրար միացնող գիծին վրայ և անոնց ներքին եղերքէն 5,18 մետր հեռու են։

ԱԶԱՏ ՆԵՏԵԼՈՒ ՆՐԲԱՆՑՔՆԵՐԸ (Free Throw lines)

Յօդ. 5 — Ազատ նետելու նրբանցքները պէտք է խաղաղաշախին վրայ որոշութիւն խրաբանչիոր վերջաւորութեան գիծի րուն միջին կէտերէն 90 ական սմ։ Հեռաւէն բարձրացնող երկերկու ուղղահայեաց գիծերով։ Այս ուղղահայեաց գիծերը պէտք է վերջանան շրջանակի մը վրայ որուն շառաւիզն է 180 սմ։ և կեղրոնք ազատ նետելու գծին միջին կէտը։



## ԿԱՆՈՆ 2

### ՑՈՒՑԱՆԻՇԱԿՆԵՐԸ (backboards)

ԶԵԽ ԵՒ ՆԻԽ

Յօդ. 1. — Ցուցանիշակներուն տարածութիւններն են, հորիզոնական կերպով գամուած են, յաւլուածական երկարածուած պղափկ մետաղի թեւի մը միջացաւ, որուն երկարածուած պէտք է անցնի օղակին կեղրոնէն։ Այս մետաղի թեւին ցուցանիշակներն վրայ հաստատուած մասը 30 սմ։ Հեռու է ցուցանիշակներն յատակէն և 10 սմ, հեռու միւս երեք կողմերէն։ Օղակները պէտք է տարածուած հորիզոնական մակարդակի մը մէջ և պէտք է ունենան գետնէն 3 մէթր բարձրութիւն իսկ օղակին ներքին եղերքէն ցուցանիշակներն մակերեսին ունեցած հեռաւորութիւնը 15 սմ։ Կ'ըլլայ։

ՑՈՒՑԱՆԻՇԱԿՆԵՐԸ (backboards)

Յօդ. 2. — Ցուցանիշակները զետնին ուղղահայեաց գիծերով զետեղուած պէտք է ըլլան, պայմանաւ որ իրենց կեղրոնքը գանուի վերջաւորութեան գիծի րուն միջին կէտերէն։ 61 սմ։ Ներսէն, բարձրացած ուղղահայեաց ներւան վրայ։ Ազատ նետելու գծին և ցուցանիշակներն հեռաւորութիւնը պէտք է ըլլայ 4 58 մետր։

ՑԱՆԴԻՍԱԿՆԵՐԸ ՑՈՒՑԱՆԻՇԱԿՆԵՐԸ 90 սմ. ԶԵԽ

Յօդ. 3. — Հանդիսականները նուազագոյն 90 սմ։ Հեռու պէտք է գտնուեն ցուցանիշակներն ու և է մէկ կէտէն։

## ԿԱՆՈՆ 3

### ԿՈՂՈՎՆԵՐԸ (Baskets)

ՆԻԽԸ, ԶԵԽ ԵՒ ԳԻՐՔԸ

Յօդ. 1. — Կողովները չուանէ կամ ուրիշ նիւթէ հրատուած ցանցեր են որոնք կախուած են 45 սմ։ Ներքին արամագիծ ունեցող մետաղ օղակներէ։ Ցանցերը այնպէս մը շինուած պէտք է ըլլան որ զնդակը մէջը ինկած պարագային յապաղեցնեն անոր անմիջական անկումը։

ՕՂԱԿՆԵՐԸ (Ring) ԳԻՐՔԸ


Յօդ. 2. — Օղակները ցուցանիշակներուն վրայ հաստատուն կերպով գամուած են, յաւլուածական երկարածուած պղափկ մետաղի թեւի մը միջացաւ, որուն երկարածուած պէտք է անցնի օղակին կեղրոնէն։ Այս մետաղի թեւին ցուցանիշակներն վրայ հաստատուած մասը 30 սմ։ Հեռու է ցուցանիշակներն յատակէն և 10 սմ, հեռու միւս երեք կողմերէն։ Օղակները պէտք է տարածուած հորիզոնական մակարդակի մը մէջ և պէտք է ունենան գետնէն 3 մէթր բարձրութիւն իսկ օղակին ներքին եղերքէն ցուցանիշակներն մակերեսին ունեցած հեռաւորութիւնը 15 սմ։ Կ'ըլլայ։

## ԿԱՆՈՆ 4

### ԳՆԴԱԿԸ

ՆԻԽԸ, ԶԵԽ ԵՒ ՄԱՆՐՈՒԹԻՒՆԸ

Յօդ. 1. — Գնդակը՝ գնդակուածեւ կաշիէ շրջապատուած և օդով լեցան քառուշուէ կը բաղկանայ որ 75 — 80 սմ, շրջագիծ և 160 — 180 տրամ ծանրութիւն ունի։ Տեղական խումբը պէտք է հայթային բոլորութիւն նոր՝ մէկ կամ լու գործածուած երկու գնդակներ որսնք



Այսպէս պօք խաղադաշտի չափականներ

Իրաւացարին զոհոցացիչ պէտք է թռչնի ևթէ գործածուած զնդակներ հայթայթման ած են այցելող խումբը իրաւունք ունի ընտրելու այն դնդակը որ պիտի գործածուի խաղի առեն և նախ քան մրցամբ միսկի վարժութիւն պէտք է ընտ առավ ։ Եթէ Նոր զնդակ մը հայթայթման ած է, խումբերէն ոչ մէկը պէտք է վարժութեան համար զոհածածէ զայն։

## ԿԱՆՈՆ 5

ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ ԵՒ ԱՌԱՑ ՓՈԽԱՆՈՐԴՆԵՐԸ  
ԽԴԻՄԵՐԸ

Յօդ. 1. — Իրաւացարները խումբ 5 խաղացիները կը բաղկանայ որոնցմէ մէկը կ'ըլլայ խըմբապետ։

ԽՄԲԱՊԵՏԸ,

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յօդ. 2. — Խումբին ն'թրկայացուցիչն է խմբավերը որ խաղը կը զեկավարէ և անոր կը հակէ։ Խաղը ոկտելէ առաջ պարաւաւոր է իր խաղացողներուն և անոնց փոխանորդներուն անունները։ Թիւերը և դիրքերը ներկայացնէ արձանագրողներուն (scorers)։ Անհրաժեշտ պարագային կարեւոր տեղեկութիւն մը կամ բացատրութիւն մը կրնայ ստանալ ու և է դաշտօնատարէ եթէ երրեք ոյդ գիմումը քաղաքավարական սահմանի մը մէջ տեղի ունեցած է։ Այս կահոնին 3 րդ և 5 րդ յօդուածներուն մէջ ցոյց արուած պարագաներէն զատ, ուրիշ ու և է խաղացող չկրնար

բայց առարտ թիւն ուղելու համար դիմում կատարել պաշտոնատարէ մը։

ԽՎՉԵՇ ՊԷՏՔ Է ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ

Յօդ. 3. — Փոխանորդող մը խաղադաշտ մանելէ տռապ, ոպրաւուոր է իր անոնք, թիւը և դիւրը անդեկացնել արձանագրողներուն։ ԳԵՂԱԿ ԱՍԼԱՑԱԾ (dead) ԱՅԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՂՆԵՐԸ  
ԵՌԵՐՍՓՈՂՈՎ ՊԷՏՔ Է ԶԱՅՆԵՆ

Յօդ. 4. — Անդիւապէս որ զնդակը ամբանոյ (dead), Արձանագրողները պէտք է եղջերափողով մը ձայնեն։ Փոխանորդողը խաղադաշտ չկրնար մանել մինչեւ որ խաղը չդադրի և խաղին չկրնար մանակցիլ մինչեւ որ իրաւացարին չանդեկացնէ ու անել չանչցուի։

ԵՐԲ ԽԱՂԱՑՈՂ ՍԵԿՐԵՆ ՎԵՐՍԻՆ ԽԱՂԻՆ ՄԷՋ ՄՏՆԵԼ

Յօդ. 5. — Զորոս անձնական ֆառուի կամ ու է ուրիշ պատճառավ տեղի ունեցող հեռացումէ զատ, խաղացող մը որ խաղը ձգած է կրնոյ անզամ մը եւս խաղին մեջ մտնել։ ԽԱՂԱԴԱԾԸ ԶԴՈՂ ԽԱՂԱՑՈՂԸ

Յօդ. 6. — Կիսախաղը չաւարտած, խաղացող մը առանց իրաւացարին (Referee) կամ Դատավորին (Umpire) արտօնութեան խաղադաշտը չկրնար թողուլ։

ԽԱՂԱՑՈՂՆԵՐԸ ԹՈՒԱԳՐՈՒԱԾ

Յօդ. 7. — Բոլոր խաղացողներն ալ պէտք է առնուազն 15 սմ. երկայնութիւն - և 2,5 սմ. Լայնութիւն ունեցող որոշ թիւեր կրեն իրենց չապիկն կանակի մասին վրայ։

Հարուսակին



**Հ. Մ. Բ. Մ. ի առաջնորդ-մարզիկները Sailors' gymnastamիմէջ մարզանի պահուն**

Կեզդոնի մարզական յանձնախումբը, Յ. Մ. Ը. Ա. ի համակելի պաշտօնեաններէն Պ. Գէորգ Մակարեանի միջոցաւ ղիմում կատարած է նոյն մարմի ամերիկան նաւազներու վարիչ Մր. Նայրուխսթի, իրենց սեփական մարզարանին մէջ հայ առաջնորդ-մարզիկներու դասընթացը մը հաստատելու համար:

Այս ղիմումը ընդունուած է, եւ շաբաթական երկու անգամ, երկուշաբթի եւ հինգշաբթի երեկոյները, օ. 30 էն 8, Հ. Մ. Ը. Ա. ի Մասնաժիշտերէն թուով մօտ 15 հոգի, խումբ մը ամերիկացի նաւազներու ընկերակցութեամբ, կը հետեւին լիշեալ դասընթացըն, ուր կ'աւանդուին շուէտականի խառնուրդ ամերիկան զրութեամբ մարզանը, խմբական խաղեր վաշիպոլ, պատերպոլ եւլին: Մարզանիք պահները կ'աւարտին տար եւ պաղ ջորի լոգանքով մը: Մարզական յանձնախումբը ասով կրկնակ օգուտ մը կ'ակնկալէ: նախ ուղղակի հետեւող մարզիկները պիտի օգտուին անհատապէս երկրորդ այս վերջինները պիտի աշխատին իրենց մասնաճիւղին մէջ, աւանդիու եւ տարածելու այս ուղղութեամբ իրենց ստանալիք ծանթութիւնները:

Այս ձեռնարկին յաջողութեան համար մարզական յանձնախումբը իր շնորհակալութիւնները կը յոյտնէ: Պ. Մակարեանի եւ Մր. Նայրուխսթի:

ԿԵԴՐ. ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱՆՁՆՍԻՌԻՄ

## ԵՌԱՄՍԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ. Ա. Ը. Մ. ԿԵԴՐՈՆԻ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱՆՁՆՍԻՌԻՄԻ

Կ աղմուրիսն .— Յանձնախումբս պաշտօնապէս կազմուած է 1922, Յունվար 26ին : Կը բաղկանայ և անդամներէ և մէկ օգնական-խորհրդականէ :

Ժողովներ .— Շարաթական մէկ կանոնաւոր ժողով կը գւամարուի ընթացիկ գործերը կարգադրելու և ծրագիրներ ուսումնասիրելու համար : Ստիպովական գործերու պարագային արտակարգ ժողովներ ու խորհրդակյութիւններ կը կառարուին :

Աշխատամիտ քածանում .— Յանձնախումբն մինչ բարաւուղարի, ուրիշ մը գանձապահի, երրորդ մը գայքապահի և չորրորդ մը կեդրոնական վարչութեան ժամ—որուն արդէն անդամ է—յանձնախումբին ներկայացուցիչի պաշտօնը կը վարէ օրդ անդամը օգնական-խորհրդական մ'է :

### ԳՈՐԾՈՒՆԷՌԻԹԻՒՆ

ՅԱՐԴ ԳՈՐԾԱԴՐՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1.— Յանձնախումբին կազմութենէն անմիջապէս վերջ՝ Մաննածիւղերու մարզական կազմութիւնը բարելաւելու գործին մէջ օգնելու համար 10 հոգինոց ենթայանձնախումբ մը կազմուեցաւ, որուն պաշտօնին մասին մանրամասն բացատրութիւններ արուեցան երկու ժղովներու ընթացքին որոնք ներկայ գրանուեցան յանձնախումբին ու ենթայանձնախումբին անդամները ինչպէս նաև մասնաճիւղերէ ներկայացուցիչներ : Անդրջապէս քննիչներու զանազան խումբեր կազմուեցան, որոնք լսու նախապէս որոշուած ծրագրին այցելեցին բոլոր մասնաճիւղերը և քննելով տեղւոյն մարզական իրական կացութիւնը թելադրութիւններ ըրին ու տեղեկութիւններ բերին յանձնախումբին, որ այսպէսով ի վիճակի եղաւ գիտանալու թէ ո՞ր մասնաճիւղերը օգնութեան կը կարօտէին և թէ Հ. Ա. Ը. Մ. մարզական ի՞նչ ոյժեր ունէր :

Ուրախ ենք ըսկու որ բոլոր մասնաճիւղերը խանդակառքէն յառաջդիմութեան կը ձգտին, բացի մէկ երկուքէն որոնք ոչ թէ նիւթական կամ կարող ոյժերէ զրկուած ըլլուպուն, այլ

պարզապէս լաւ արամադրութեան չգոյաթեան պատճառաւ թիմրութեան անարդարանալի վիճակի մը մէջ են :

2.— Կեդրանի վարչութենէն խնդրուեցաւ անմիջապէս հայկական հանրապետութեան Բարիգի ներկայացուցիչին միջոցաւ միջազգային Աղիմրիականներու կեդր, Յանձնախումբին հետ յարաբերութիւն հաստատել, որպէս զի ասկէ վերջ կատարուելիք համաշխարային Աղիմրիականներուն Հայերս ալ կարողանանք մասնակցիլ :

3.— «Բրոֆէսիոնէլչութեան լուրջ վանդալը որ ամրող մարզական աշխարհը կը զբացեցնէ, պահ մը իր սպառնալիքը հոս ալ զգալի բրած ըլլալով յանձնախումբս թերթերու միջոցաւ և շրջարերականներով բոլոր մասնաճիւղերուն ու հայ մարզիկներուն ստիպովական ազգարարութիւններ բրաւ :

Յանձնախումբս գործի ձեռնարկած ժամանակ վերոյիշեալ վասնդը արդէն երկու կարուղ հայ մարզիկներ կուլ տալու վրայ էր, բայց մեր ջանքերուն շնորհիւ կարելի եղաւ զանազան փրկել :

4.— Մօտ օրէն յանձնախումբին կողմէ մարմնակրթանքի երկու օրինագիրքեր կը հրատարակուին, որոնք պիտի կրնան գործածուիլ որպէս առաջնորդ թէ մարմնակրթանքի և թէ զանազան խաղերու համար :

5.— 1921 տարւոյ Հ. Ա. Ը. Մ. Աղիմրիականին չափազանց ուշանալէն հրահանգուած՝ ուրոշուեցու այս տարուան Աղիմրիականը Օգոստոսի սկիզբը ընել ինչ որ բոլոր մասնաճիւղերուն ծանուցուած է :

6.— Եկատի առնելով Հ. Ա. Ը. Մ. մարզարանի մը չգոյութիւնը՝ յանձնախումբս յարմար դատեց գիմել ու իրենց մարզարաններուն չարաթական 1—2 անդամ մեզի արամադրութիւններ ըրին ու տեղեկութիւններ բերին յանձնախումբին, որ այսպէսով ի վիճակի եղաւ գիտանալու թէ ո՞ր մասնաճիւղերը օգնութեան կը կարօտէին և թէ Հ. Ա. Ը. Մ. մարզական ի՞նչ առթիւ յանձնախումբս պարտականութիւն կը համարէ իր շնորհակալութիւնը յայտնել յիշեալ հաստատութիւններու անօրէնութեանց ինչպէս նաև Պալոսյ նոյն ընկերակցութեան պաշտօնեաններէն Պր. Գէորգ Մակարեանի որ ոոյն ձեռնարկին յաջողութեան մեծապէս սատարեց :

Ներկայիս սոլոր մասնաճիւղերէն 10—15 հո-  
դի կը մասնակցին շաբաթական կանոնաւոր  
փորձերուն :

7. — Խառն ֆութալի թիմ մը կը կազմուի  
Պուլիս այցելելիք Զիխոսլովաք թիմին գէմ մըր-  
ցելու համար :

8. — Վ. Մ. Ա. Բ նախաձեռնութեամբ  
Յունիս 2—4 ներայի մէջ անդի ունենալիք մի-  
ջազդային Աթլեթիք խաղերուն առժին, յանձ-  
նախումքա մասնաճիւղային երկու նախավարձեր  
ստրքել ծրագրելով, սոյն որոշումը մասնաճիւ-  
ղերուն հաղորդած է :

ԿԵԴՐ. ՄԱՐԶԱԿԱՆ ՑԱՆՑԱԱՌԻՄ



## ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԱԹԼԵԹԻՔ ՄՐՑՈՒՄՆԵՐ

2—4 ՅՈՒՆԻՍ 1922

«ՍԹԱՏԻՌՈՒԻ ՄԷՋ (ԹԱՔՍԻՄ)»

Այս միջոցիս Պօլոսյ մարզական միջազ-  
դային միութիւնները տենդագին գործունեու-  
թեան մէջ են, Յունիս 2—4ի Աթլեթիք մար-  
զահանդէու փառաւոր կերպով տօնելու համար :

Միջազդային Մարզական Յանձնուխումին  
կ'անդամակցին Մր. Ֆիլիփս (Նախագահ), Մր.  
Ռուբինսըն քարտուղար, Մր. Աթլեթիք և Պ.  
Ռուծունի Վ. Մ. Ա. Բ կողմէ, Պ. Պ. Վահրամ  
Փափազեան և Լեռն Յակոբեան Հ. Մ.  
Բ. Մ. Բ կողմէ, Այլիս պէյ և Պիորհանէտ-  
տին պէյ թուրքերու կողմէ, Մ. Մէնէլի և  
Մ. Ֆլորիստին յայներու կողմէ, Մ. Ապրամ-  
յիչ և Մ. Պէրքովիչ հրեաներու կողմէ, և Մ.  
Կորուցքի ռուսերու կողմէ :

Իր յաջորդական նիստերու ընթացքին  
հարկ եղած նախապատրաստական աշխատանք-  
ները կատարուած է :

Մրցումները կատարել որոշուած են թաք-  
սիմի «Աթլատիոն» մարզարանին մէջ,  
որ իր ընդարձակութեաւոր այս կարգի ամէն  
փորձերու յարմարագոյն վայրն է : Վաղքի  
trackին շրջագիծն է մատաւորապէս 375 մ.թր:  
Թէեւ մարզադաշտը տակաւին իր կատարեալ  
վիճակը չ'է ստացած քայլ յայս կայ որ մինչեւ  
մրցումներուն օրը նոր յարդարումներ ու  
ըլլան :

Տեղի ունենալիք մրցումները հետեւ-  
եալներն են :

110 մեր ցանկացաւ (hurdles) 100 մեր  
վազք, 200 մեր վազք, 400 մեր վազք, 800  
մեր վազք, 1500 մեր վազք, 5000 մեր վազք,  
10000 մեր վազք, Աւտով բարձուրին ցատկել,  
Կեցած բարձուրին ցատկել, Աւտով երկայնու-  
րին ցատկել, Կեցած երկայնուրին ցատկել, Ե-  
րեւ բայլ ցատկել, Չողով բարձուրին ցատկել,  
Երկու նետել, Նիզակ նետել (միջերկել) :

Առանցմէ զատ անդի պիտի ունենան նաեւ  
իւրաքանչիւր ազգութեան կողմէ ութական  
հոգիի միջնու չուան քաշելու և  $\frac{1}{4} \times 400$  մէթր  
դրօշարշաւի մասնաւոր մրցումներ :

Վեց ազգութեանց և կազմակերպութեանց  
միջնու (Վ. Մ. Ա. Բ Յայս, Թուրք, Հայ,  
Հրեայ, և տեղացի օտար խառն խումբերու  
միջնու) անդի ունենալիք ֆութալի մրցում-  
ներէն զատ, պիտի ըլլան նաեւ Պասքէթազուի,  
Վալի Պոլի, Քէյճ Պոլի, մարմնաւորզի, բուր-  
գերու և մարզական պարերու ցուցադրու-  
թիւններ :

Այս մրցումներուն կրնան մասնակցիւ  
րուր այն ամառեօն մարզիկները որոնք մինչեւ  
1922 Յունուար 1, մարզական միութեան մը  
անդամ հղած են :

Մարզական մրցումներուն մէջ շահող երեք  
լաւագայններուն պիտի արուի սոկի, արծաթ և  
պղինձ մրցանակներ : Իսկ ժամանակի և հնաւ-  
որութեան որոշ սահմաննեն համազնեղուն  
պիտի արուի Արժանիքի մրցանակներ (médailles de mérite) :

Մասնաւոր մրցումներուն համար պիտի  
արուին մասնաւոր մրցանակներ :

Յուցադրութիւններուն համար յիշատա-  
կութեան մրցանակներ իսկ ֆութալի ախոյեա-  
նին արձարեայ յաղբական վահան մը (Shield):

Այս մրցումներուն մէջ կեցած երկայնու-  
թիւն և բարձրութիւն ցատկելու մրցումները  
նախապէս զանց առնուուծ էին բայց հայ պատ-  
ուիրակներու առաջարկին վրայ անոնք ալ յայ-  
տագրին մաս կազմեցին : Իսկ Յայներու ա-  
ռաջարկով ընդունուեցաւ 10000 մէրքի վազք :

Օրուան մանրամասն յայտագիրները պիտի  
հրատարակուին չորս լեզուով և տեղայն վրայ  
պիտի ծախուին :

Մուաքի գումարէն գոյանալիք հասոյթը

սպատի բաժնուի մասնակցող ազգութեանց կամ  
կազմակերպութեանց միջեւ:

ՀՈՎԱՆԱԿՈՐՈՒԹԻՒՆ

Հանգէսին հովանաւորութիւնը առաջար-  
կած է վէհ։ Առլթանին, մերմերու պարա-  
գային պիտի առաջարկուի գահաժառանդ Առ-  
տիւլ Մէծիս էֆ. ի. :

ՊԱՏՈՒՈՅ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

Թուրքերու կողմէ իշխան Էօմէր Ֆարուք  
պէյ, պատերազմական նախարար Սալիհ փաշա  
և արտաքին գործոց նախարար Իզդէջ փաշա։

Անգլիացիներու կողմէ Զօր, Հարբինկթըն և  
բարձր քամիսէր Ռունգուա և անդակալ Մաք-  
սուլի։

Անգրիկացիներու կողմէ ծովակալ Պրիստոլ,  
Ֆրանսացիներու կողմէ Զօր, Բէլէ և  
բարձր քամիսէր Շաբրի։

Իտալացիներու կողմէ Զօր, Մոնթէլի և  
բարձր քամիսէր Դուքս Կարոնի։

Ճարօնի կողմէ Դուքս Օշիա։

Հելլէններուն կողմէ Զօր, Քուցիս և բարձր  
քամիսէր Թրիանտաֆիլաքոս։

Խոյնակէս Պատուոյ յանձնախումբի անդամ  
նշանակուած են հայերու կողմէ Պ. Պ., Թահ-  
թահնեան Հ. Հ. Դիւան, Ներկայացուցիչ,  
Շահքերանեան Հ. Ս. Խ. Հ. անտեսական ներ-  
կայացուցիչ և Զ. Խորտուննեան Հ. Մ. Է. Մ. ի-  
նեղը, Վարչ, Ատենապետ։

Վ. Մ. Ա. ի կողմէ Բրօֆ, Հընթիկթըն,  
(Խոպրթ Քօլէճի գեր տնօրէն և Վ. Մ. Ա. ի  
նախագահ) և Մր. Սթէլիըր (Վ. Մ. Ա. ի  
Թուրքիոյ ընդէ. քարտուղար)։

Յոյներու կողմէ Տօքթ, Անթիբաս (Յոյնե-  
րու ընդէ. սկառտապետ) (մեացեալ երկուքը  
յառաջիկային պիտի որոշուին)։

Հրեաներու կողմէ Փօկէֆ Միլէկ (Պէնէ  
Պէրիդներու նախագահ), Մօրիո Արքահամալիչ  
(Միօնիսթներու նախագահ)։

ԽՈՐՀՈՒԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

Այս յանձնախումբին կ'անդամակցին Մր.  
Ռէյէնտըլ (Ամերիկ, Հիւպատաս) Վ. Մ. Ա. ի  
կողմէ Տօք. Հուվըր (Ամերիկ, հիւանդանոց-  
ներու պետի կողմէ) Տօք. Սալիի հայերու  
կողմէ, Տօք. Անթուան Թրիթիքոս յոյներու  
կողմէ, Թուրքերու կողմէ Սալահէտարին պէյ,  
Մէլիմ Արքրի պէյ, Հրեաներու կողմէ Պաղիրա-  
ստանդակ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

Օժանդակ յանձնախումբին Հայերու կողմէ  
անդամ նշանակուած են Պ. Պ., Գրիգոր Ճօլո-  
ւան, Շահնան Կիւրմեան և Արքատ Թրիսեան,

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

Մր.	Պօյտ	Վ. Մ. Ա. ի	կողմէ
Պ.	Օննիկ	Ֆրէնկեան	հայերու
Մ.	Տէվէճիս		Յոյներու
Ա	Այիստ պէյ		Թուրքերու
Մ.	Մուքիսիի		Հրեաներու

ՏՈՄՍԵՐՈՒ ՔՆՆԻՉ

Պ.	Արամէ կեսարեան	Հայերու	կողմէ
Պ.	Պօղոս Ֆիշիպէյեան	Վ. Մ. Ա. ի	"
Մ.	Շէրլէր	Հրեաներու	"
Մ.	Մէթաքսաս	Յոյներու	"
Շէրիֆ պէյ		Թուրքերու	"

Օրուան պաշտօնատար նշանակուած են Հէ-  
տեւեալները։

ԸՆԴՀ. ԴԱՏԱԿՈՐՆԵՐ

Պ. Բիւզանդ Կէօզիւ.պէյիսի.քեան, Սէլիս  
Սըրրի պէյ և Տօքթ. Անտրէա Անթիբաս  
իրակ ԱՐԱՐ

Մր. Բ. Բ. Ֆիլիբու։

ՑԱՄԲԱՑ ՀԱՆՈՂՆԵՐ

Մէջիի պէյ, Մր. Ֆլորիափս։

ՎԵՐՋԱԿՈՐՆԻԹԵԱՆ ԴԱՏԱԿՈՐՆԵՐ

Մր. Վան Պօրէլ, Մր. Բէմբրօրուլօս, Եռ-  
սուք Զիս պէյ, Պ. Գրիգոր Ճօլուեան, Տօքթ,  
Եռբէլիզ։

ԴԱՏԱՑՅԻ ԽԱՆԵՐՈՒ ԴԱՏԱԿՈՐՆԵՐ

Մ. Լոմպրօզո, Պ. Լեռոն Յակոբեան, Մ.  
Քօսթանմին Տէվէճիս, Պիւրանէտարին պէյ, Մ.  
Շթիլիլից։

ԺԱՄ ԲՈՆՈՂՆԵՐ

Բրօֆ, Պարնըմ, Մր. Պօյտ, Մր. Քարօչէ-  
րի, Անմէտ Իզզէթ պէյ և ուրիշ ամերիկացի մը։

ՅԱՅՐԱՐԱՐՈՂՆԵՐ

Պ. Ժիրայր Խօրասաննեան, Մր. Սթիլընս,  
Ինսան պէյ, Ճօն Միխայէլիսիս, Մր. Ա.քիկոթի։  
ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐ

Մր. Բոպէնսըն, Պ. Պօղոս Շապօնեան, Մ.  
Քիւչիւքի և ուրիշ երկու ընտրելիներ։

ԲԺԵԿԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Տօքթ. Յօթիստափս, Տօքթ. Սալիի, Տօքթ.  
Հուվըր, Տօքթ. Հատիպիստի, Տօքթ. Վաղիսաւ

ՎԱԶՔԻ ՔՆՆԻՉ

Պ. Ժիրայր Ամբատեան, Մ. Բէֆիք պէյ,  
Լյուտ, Մաղնար պէյ, Մ. Եօնաս,

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ

Պ. Հայկ Ճիզմէճեան, Ըսլան պէտ, Մր.  
Թակարիս, Մր. Անժէլ, Պ. Ալպէտ. Փէղճեան,  
ՀԻՒՐԸԿԱԼՆԵՐ

Մր. Ալֆրէտ արք Պէրրի, Պ. Օննիկ Գովան  
Մր. Հէտըն, Մր. Աբանի, Մահմատ պէտ,  
ՌԱՏԻԿԱՆԱՊԵՏՆԵՐ (Marchals)

Մր. Նայքուիսթ, Մր. Վայնպէրի, Մր. Զօն-  
պուր օղլու, Բլհամի պէտ, Մր. Լոյտա:

Աստիկանապետ թիւնն հրամանին առաջ  
պիտի ըլլան 100 սատիկաններ:

Իսկ 50 սկառաներ այլ պիտի ուղաբն  
Միջ, Ակտ, յանձնախում մըկն:

ՄԱՄՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԹՆԵՐ

Քէրթըն Ալըն, Պ. Արիունի, Մ. Աթան-  
կոս, Մ. Ալթապէն, Շէրէփէտախն պէտ:

ՖՈՒԹՊՈԼԻ ԻՐԱԿԱՐԱՐ

Քէրթըն Ալըն, (Երկու իրաւարարի նշա-  
նակուիլն ալ պիտի խնդրուի դաշնակից ուժե-  
րու աթլէթիկի պէտ Մր. Մըրֆիէն):

ՖՈՒԹՊՈԼԻ ԺԱՄԱՊԱՀՆԵՐ

Քէրթըն Էլըն, Հասան Քեամիլ պէտ, Մր.  
Արչիեօթի:

ԽԱՂԱԴԱՏՏԻ ԳՄԵՐՈՒ ԴԱՏԱԿՈՐՆԵՐ

Պ. Վ. Ա. Փափագեան, Մ. Պէհմօրաս,  
Պ. Արծրունի, Մ. Քացարիս, Մ. Վասիլիէֆ:

ԿՈԼԻ ԴԱՏԱԿՈՐՆԵՐ

Պ. Վարագ Փողարկան, Զէքի պէտ, Միօ-  
թիս, Սօլոցգոս:

ՄԱՍՆԱԿՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ մարզիկներու ընդհ. վարիչ նշանակ-  
ուած է Պ. Վահրամ Ա. Փափագեան:

Մրցումներու աեւողութեան ընթացքին աեղի  
պիտի ունենան հաւաքական մարզանքի բուր-  
քերու ևն. կազմութիւն, որոնց մէջ հայերու  
կողմէ մաս պիտի առնեն Պէլլէրպէճի, Գարո-  
գիւղի մխիթարեան որրանցներու և Էսա-  
եան որբանոցի սաներն ու սանուհիները,  
առաջնորդութեամբ, Պ. Մկրտիչ մալումնունի,  
Պ. Արարատ Քրիսեանի և Պ. Հրանդ Պարու-  
մեանի:

Միջազգային աթլէթիկ ախոյեանութեան  
մրցումներէն առաջ աեղի պիտի ունենան  
փութողի ախոյեանութեան մրցումները Մայիս

21ին, 26ի և 28ի Կիրակի, Ուրբաթ և Կիրակի  
օրերը: Քուէի գրութեամբ առաջին փորձ  
մրցումը վիճակուած է Վ. Մ. Ս. Ա. ի Հրեա-  
ներու, երկրորդը Յովներու և օտար խառն  
խումբի (8 Խուռա և Անգլիացի և 1 Ֆրանսացի)  
խոկ երրորդը Հայերու և Թուրքերու միջեւ:  
Մայիս 21ին և Մայիս 28ին յաղթական երկու  
խումբները կրկին պիտի մրցին Յունիս 2ին խոկ  
այս վերջնոյն և Մայիս 26ին յաղթող խում-  
բերը պիտի մրցին Յունիս 4ին ուր վերջնական  
յաղթանակը տանող և ախոյեանութիւնը շունդ  
խումբը պիտի ստանոյ 300 ոսկի արժողու-  
թեամբ յաղթուքեան արծարեալ վահան մը:  
Այս վահանին վերջնական կերպով արհանալու  
համար խումբը մը՝ պարաւուր է հինգ տարի  
յաջորդաբար շահիլ դայն:

ՏԵՂԵԿԱԲԵՐ

Իր խնդրով մեր խորելի բաժանորդներն եւ  
գործակարներն որ հանին իրենց համակարգ  
զոցել առաջին առքին, խոկ երե չեն ուզեր  
թեր սահալ հանին իրենց սացած բխերուն  
փոխարժեք գրիել մեզ:

Վարչուքին

ՍԱԱՑԱՆՔ

ՀՀայկաէն գրատան հրաւարակութիւններ, Բերա  
Գաղորիսան փուլոց 37:

Կեանքի եկ ՄԱՀՈՒԱՆ Երգեր Մ. Զարիֆեանի:  
Մատենաշար «Հրազդան» թիւ 1: Կին 50 դրշ:

ՄՈՒԼՈՄԻԹ (Սոլոմոն թագաւորի կեանքին) Մուսե-  
րմնէ: Թագմաննեց Ա. Ար. մատենաշար «Հրազդան» թիւ  
2: Կին 25 դրշ:

ԲԱԶՄԱՎԵԿ Ամսագրի բանասիրական, զիտական եւ  
բարյուղան: Բամնեղին 25 դրշ: Հասցէ՛ Տ. Lazat  
Venise (Italia):

Վ. ՄՐՈՒՄԱԵԱՆՑԻ ԵՐԿԵՐԷՆ

ՀԱՅ ԵՐԳԵՐԻ Հատու. Ա. Եւ Բ.

Մեներգեր ընկերակցութեամբ դաշնամուրի

Կեղրանահոդի Հեղինակի մօս

V. Servantsdiantz

70, Boulevard de Grenelle — Paris (15e)

Կը զոնտի նաև: «Հայ Ակատուի խմբագրատունը:

ՀԱՅ ՍԿԱՌԻ

Հասցէ 25-26 Խօրասաննեան խան Միքրէճի Ա. Պոլիս  
թամանորդագին 120 դրշ. 15 դր. 1,0 տոլար տարեկան

Համար 5 դրշ:

Հայ Seout 25-26 Horassandjian Han Sir-  
kédi: Constantinople

Բանք

100	15
242	14
15	5
142%	55
142%	

5"

— 256 —

**ԱԹԼԵԹԻԿ ԽԱՐԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՆԻՇԵՐԸ (ԱԿԹՈՒ ՀԱՇԽՎ)**

Խ.Ա.Ղ.ԵՐՈՒ ՏԵՍԱԿԸ	Ամերիկա	Անգլիա	Շոտլանդիա	Գերմանիա	Ֆրանսա	Ֆինանսութիւն	Արտվարժանիա	Երրանութիւն	Դանուպալիա	Առաջնութիւն	Հարաւ.Ափրիկէ.	Հարաւ.Աթլանտ.	Աւստրիա	Համազարիա	Ուուսիա	Պօնէմիա	Պէլճիզա	Զուիցերիա	Իտալիա	Տանիմարգան	Հայկական (Պօլիս)	
Ոյժ Առած Բարձրութիւն	2.006	1.961.905	1.9231.885	1.826	1.87	1.94	1.89	1.85	1.85	1.80	1.84	1.75	1.91	1.70	1.72	1.75	1.66	1.67	1.77	1.70		
Կեցած Բարձրութիւն	1.67	1.82	1.50	1.47	1.52	—	—	1.45	—	—	—	—	1.44	—	1.41	—	—	—	1.32	1.40		
Չողով Բարձրութիւն	14.02	3.45	3.85	3.79	3.74	3.43	3.55	3.35	3.70	3.36	3.09	3.55	3.55	3.59	3.40	3.37	3.10	—	3.60	3.08		
Ոյժ Առած Երկայնութիւն	7.60	7.61	7.20	7.07	7.07	6.62	7.24	7.61	7.22	7.19	7.26	6.93	7.01	6.72	7.07	6.55	6.82	6.68	6.12	6.51	6.85	6.75
Կեցած Երկայնութիւն	8.476	3.69	3.20	3.41	3.31	—	—	3.11	—	—	—	3.14	3.15	3.10	3.05	—	—	2.97	—	3.065		
Երեք Քայլ Երկայնութիւն	15.52	14.91	14.76	14.17	14.47	14.71	—	—	—	—	—	—	13.61	—	—	—	—	—	13.89	12.87		
Գուհան Հետեղ	15.54	14.87	14.44	13.60	12.15	14.86	14.71	—	15.12	13.48	13.49	13.20	13.14	13.60	13.97	11.88	12.18	12.20	11.74	—	11.85	12.12
Ակուսառակ Նետեղ	47.58	36.87	43.70	42.48	43.21	48.27	—	36.87	42.68	38.41	—	—	35.70	45.54	46.86	37.60	42.63	34.57	36.94	—	—	35.99
Հիգակ (Մէջանեղեն)	51.77	54.82	62.50	57.15	47.97	62.32	—	—	40.70	—	—	—	57.60	—	56.14	44.40	52.79	—	—	44		